Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ հետևյալ հղմամբ:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝	
Հաճախորդ	Ա՝ 1.2-5 միլիարդ բանկային շրջանառություն[1] կամ Բ՝ 5 միլիարդ և ավելի բանկային շրջանառություն կամ ՀՀ առաջին 50 խոշոր հարկատուներ[1]
Ակրեդիտիվի արժույթ	ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող փոխարժեքների ցանկի համաձայն
Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ
	Պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության նվազագույն ցանկը ներկայացված է «Փաստաթղթեր» բաժնում: Բանկի կողմից, ըստ անհրաժեշտության, կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:
Նպատակ	Շրջանառու միջոցների ձեռքբերում, հիմնական միջոցների ձեռքբերում/ կապիտալ ներդրումների իրականացում
Ակրեդիտիվի նվազագույն գումար (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)	Չի սահմանվում
Ակրեդիտիվի առավելագույն գումար (ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ)	Չի սահմանվում
Տոկոսադրույք կամ տրամադրման/թողարկման վճար[2]	Պայմանագրային* *(Տոկոսադրույքը կարող է փոփոխվել Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում)*
Օտարերկրյա ֆինանսական հաստատության /ՕՖՀ/ հաստատմամբ ակրեդիտիվների թողարկում[3]	Պայմանագրային*
Ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում	Պայմանագրային*
Ուղղակի ակրեդիտիվների /առանց ՕՖՀ հաստատման/ թողարկում	Պայմանագրային*
Ընդ որում՝ միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում	Պայմանագրային*
Ակրեդիտիվի ներքո վճարում	0.15 %, Նվազագույնը՝ 5 000 ՀՀ դրամ, Առավելագույնը՝ 75 000 ՀՀ դրամ

Առանց տարածայնությունների փաստաթղթերի ընդունման և ստուգման համար	Անվճար
Տարածայնություններով փաստաթղթերի ընդունման և ստուգման համար	Անվճար
Նվազագույն ժամկետ	Չի սահմանվում
Առավելագույն ժամկետ	Գործարքի պայմանագրային ժամկետին համապատասխան
Տոկոսագումարների մարումներ	Պայմանագրային*
Դիմում-հայտի ուսումնասիրության վճար, ընդ որում՝	Չի սահմանվում
միայն դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից թողարկած պարտատոմսերի ապահովվածության դեպքում (գանձվում է յուրաքանչյուր վարկային գործիքի համար)՝	Չի սահմանվում
Տրամադրման/թողարկման վճարի գանձումներ[3]	Միանվագ տրամադրման պահին՝ գործողության ողջ ժամկետի համար և վաղաժամկետ մարման դեպքում վերադարձման ենթակա չէ
Բանկային հաշվի բացում	Համաձայն Բանկում գործող Բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագների ու պայմանների (տես՝ Բանկային հաշիվ)
Քաղվածքների տրամադրում	Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք, 1,000-10,000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ Բանկային հաշիվ):
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	Ըստ ապահովվածության տեսակների Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցության մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է «Այլ պայմաններ» բաժնի «Հավելված 1. Վարկի վերադարձելիության ապահովվածություն» փաստաթղթում:
Ապահովագրություն[4]	**A դասի դեպքում՝** 1) Արտահանման/ներմուծման ֆինանսավորման դեպքում բեռների ապահովագրության իրականացում (ապահովագրության բացակայության դեպքում) 2) Այլ դեպքերում՝ Բանկի պահանջով **P դասի դեպքում՝** Բանկի պահանջով
ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ԵՎ ԳՐԱՎԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
Վարկառուին ներկայացվող այլ պահանջներ	Բանկային հաշվի առկայություն (պարտադիր)
Գրավատու կարող է հանդիսանալ	ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք

ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ	
Ապահովվածություն	Ապահովվածության տեսակների և պայմանների մասին մանրամասն ներկայացված է «Այլ պայմաններ» բաժնի «Հավելված 1. Վարկի վերադարձելիության ապահովվածություն» փաստաթղթում:
ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ	
Ժամկետանց տոկոսագումարի դիմաց տույժ	Պայմանագրային, որը չի կարող գերազանցել օրենքով սահմանված առավելագույն չափը
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	
Այլ դրույթներ	Այլ դրույթների մասին մանրամասն ներկայացված է «Այլ պայմաններ» բաժնի «Հավելված 2. Այլ դրույթներ» փաստաթղթում:
ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԳՈՐԾՈՆՆԵՐ	
Որոշման կայացման ժամկետ	Որոշման կայացման ժամկետները կախված են բիզնեսի առանձնահատկություններից և յուրաքանչյուր հայտի դեպքում կարող են տարբերվել:
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	1 աշխատանքային օր
Տրամադրման ժամկետ	1 աշխատանքային օր՝ գրավի պայմանագիրը նոտարական վավերացում և գրավը կադաստրային գրանցում ստանալուց հետո, որը կարող է փոփոխվել ակրեդիտիվի թողարկման համար այլ նախապայմանների առկայության դեպքում

[1] Հաճախորդների դասերի շնորհումը կատարվում է ըստ Բանկի "Հաճախորդների դասակարգման ընթացակարգի"

*Պայմանները որոշվում են՝ ելնելով մի շարք գործոններից, մասնավորապես.
- Բանկի հետ համագործակցության ծավալներից
- Կազմակերպության ֆինանսատնտեսական ցուցանիշներից
- Վարկային պատմությունից և այլն:

[2] Արտարժույթային Ակրեդիտիվի դեպքում հաշվարկումը և գանձումը կատարվում է ՀՀ դրամով, փոխարկելու համար հիմք ընդունելով վճարման պահին Բանկում գործող արտարժույթի վաճառքի փոխարժեքը

[3] Օտարերկրյա ֆինանսական հաստատության (ՕՖՀ) կողմից ներկայացված միջնորդավճարները գանձվում են առանձին, ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ:

[4] Ապահովագրության պայմանի դեպքում Բանկի լրացուցիչ համաձայնությամբ ընդունելի է Հաճախորդի կողմից ցանկացած ապահովագրական ընկերությունում կատարված ապահովագրությունը՝ համաձայն տվյալ ապահովագրական ընկերության կողմից տրամադրված պայմանների և սակագների:

ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

Օտարերկյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Եթե Դուք հանդիսանում եք Ակրեդիտիվի ԵՐԱՇԽԱՎՈՐ, պետք է տեղեկացված լինեք, որ եթե հաճախորդը չկատարի իր պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից:

Ակրեդիտիվի պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքումհաճախորդը կարող է զրկվել գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:
Գրավի հաշվին պարտավորությունների ամբողջական չմարման դեպքում պարտավորությունների ամբողջական մարումը կկատարվի հաճախորդի և գրավատուների այլ միջոցների և գույքերի հաշվին:

Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝
Մարվում են ժամկետանց Տոկոսագումարի վրա հաշվարկված (կուտակված) Տուժանքը, ժամկետանց Դեբիտորական պարտքի վրա հաշվարկված (կուտակված) Տոկոսագումարը, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց Տոկոսագումարը, ժա-մկետանց Դեբիտորական պարտքի գումարը, Դեբիտորական պարտքի վրա հաշվարկված (կուտակված) ժամկետային Տոկոսագումարը, Դեբիտորական պարտքի գումարը:
Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց հաճախորդին տեղեկացնելու:

Արտարժույթով տրամադրվող Ակրեդիտիվի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ ակրեդիտիվի մարումների վրա:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Բանկի Մոբայլ բանկինգի և I-Banking-ի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ:

Գնահատող կազմակերպությունների ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ:

Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ:

Սքորի և վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԱԿՐԵԴԻՏԻՎԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: